ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ Ազգային ժողովը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համացանցի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքում 2018 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-19/1-1 պայմանագրում 2019 թվականի փետրվարի 5-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթերի պատճենները:

Փոփոխության առաջացման պատճառ՝	Պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով, սակայն ներկայումս առկա են ֆինանսական միջոցներ:
Փոփոխության նկարագրություն՝	Ծառայության ձեռքբերման նպատակով հաստատվել է ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը:
Փոփոխության հիմնավորում՝	Պայմանագրի 7.5, 7.15, 4.1 և 4.2 կետերի հիմքով

Պատվիրատու՝ ՀՀ Ազգային ժողով:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
19.12.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-19/1-1 ծածկագրով պետական գնման պայմանագրի

ք.Երևան «05» 02 2019թ.

ՀՀ Ազգային Ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Տ. Գալստյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ)՝ մի կողմից, և «ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Հ. Ֆարամազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին /այսուհետ՝ Կողմեր/, հիմք ընդունելով 19.12.2018թ. կնքված N ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով Պայմանագրի 4.1 և 4.2 կետերը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 27.12.2018թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» թիվ 1515-Ն որոշումը՝ Կողմերը որոշեցին համացանցի ձեռքբերման նպատակով հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը համաձայն՝ կից ներկայացված Հավելված N1-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերեն լեզվով՝ կնքված երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1 հավելվածը, համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ԱԺ աշխատակազմ	«ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
ք. Երևան, Բաղրամյան պող.19	Հասցե՝ ք. Աբովյան, Խաղաղության 1
ՀՎՀՀ 00008519	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1930011980040100
Հ/Հ 900011020089	ՀՎՀՀ 00096001
ՀՀ ԱԺ աշխատակազմի	Գլխավոր տնօրեն՝
ղեկավար-գլխավոր քարտուղար	Հ. Ֆարամազյան
Տ. Գալստյանի	
_____	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 1
«19» դեկտեմբերի 2018թ. կնքված
ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-19/1-1 ծածկագրով պայմանագրի
« 05 » « 02 » 2019 թ. կնքված N1 համաձայնագիր

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	32411130/505	Համացանց	-	870000	870000	1740000	1740000	1740000	2610000	2610000	2610000	3480000	3480000	3480000	3480000

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

Գ Ն Ո Ր Դ

ՀՀ ԱԺ աշխատակազմ
ք. Երևան, Բաղրամյան պող.19
ՀՎՀՀ 00008519
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011020089
ՀՀ ԱԺ աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար
Տ. Գալստյան
(ստորագրություն)
Կ.Տ

Վ Ա Ճ Ա Ռ Ո Ղ

«ՋԻԵՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ
Հասցե՝ ք. Աբովյան, Խաղաղության 1
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 1930011980040100
ՀՎՀՀ 00096001
Գլխավոր տնօրեն՝
Հ. Ֆահրադյան
(ստորագրություն)